ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/152

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ
Մասնակից՝ «Օկտո» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Օկտո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ի. Դանիելյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, արևային վահանակների տեղադրման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9350-2021 գրությամբ «Օկտո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 04.06.2021թ.-ի թիվ Հ.Մ./02-117/121 գրության հիման վրա, 10.06.2021թ.-ին «Օկտո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 10.06.2021թ.-ին:

10.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2021/152 համարի ծածկագիրը:

17.06.2021թ.-ին, 30.06.2021թ.-ին և 09.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.07.2021թ.-ին:

2. «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն 04.06.2021թ.-ի թիվ Հ.Մ./02-117/121 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ Ընկերության կարիքների համար «Արևային վահանակների տեղադրման աշխատանքների կատարման» ձեռքբերման նպատակով՝ 2021 թվականի մայիսի 17-ին հայտարարվել է N ՀՀՀ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

2021 թվականի մայիսի 24-ի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստում պարզվեց, որ մրցույթի մասնակից «ՕԿՏՕ» ՍՊԸ-ի կողմից կցված փաստաթղթերը ստորագրված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ,-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սակայն «ՕԿՏՕ» ՍՊ Ընկերությունը խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետը և սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Օկտո» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Օկտո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 10.06.2021թ.-ի գրությամբ դիմել է «Օկտո» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9350-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը 14.06.2021թ.-ին ներկայացնելով ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում հայտնել է հետևյալը.

««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ Ընկերության (այսուհետ «Պատվիրատու») կարիքների համար Արևային վահանակների տեղադրման աշխատանքների կատարման ծեռքբերման նպատակով 2021 թվականի մայիսի 17-ին

հայտարարվել է N ՀՀՀ- ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ «Գնում») հայտարարությունը և հյավերը:

Գնման ընթացակարգի մասնակից է եղել նաև «Օկտո» ՍՊ Ընկերությունը (այսուհետ «Մասնակից» կամ «Ընկերություն»):

2021 թվականի հունիսի 2-ին Պատվիրատուի կողմից գրություն է ուղղվել ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալին խնդրելով ներառել Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մուսնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետը: Նշված գրությամբ հայտնվել է, որ 2021 թվսկաևի մայիսի 24-ին գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստում պարզվել է, որ Մասնակցի կողմից կցված փաստաթղթերը ստորագրված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ըստ գրության հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել է Մասնակցին՝ առաջարկելուլ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոշարադրյալի հետ կապված գնումների հետ կապված բողոք քննող անձին հայտնում ենք հետևյալը

«Օկտո» ՍՊ Ընկերությունը երրորդ տարին է, ինչ գործունեություն է ծավալում արևային էներգետիկայի ոլորտում: Այս ընթացքում Ընկերությունը բազմիցս մասնակցել է պետական և ոչ պետական տարբեր մարմինների կողմից կազմակերպված մրցույթներին, մշտապես բարեխղճորեն կատարել է իր կողմից ստանձնած պարտականությունները: Այս ընթացքում Ընկերությունը պատշաճ կատարել է իր գործընկերների և հաճախորդների (անհատներ, մասնավոր կորպորատիվ հաճախորդներ, միջազգային ընկերություններ, պետական կառույցներ) առջև ստանձնած պարտավորությունները:

Ընկերությունը Գնման ընթացակարգի շրջանակներում կրկին մասնակցության հայտ է ներկայացրել և ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Սակայն, 2021 թվականի մայիսի 24-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից կցված փաստաթղթերը ստորագրված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչը ենթակա է շտկման, և էլեկտրոնային ծանուցմամբ առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Այնուհետև, 2021 թվականի մայիսի 26-ի թիվ 3

արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները չեն շտկվել: Սակայն, հարկ է նշել, որ նշված էլեկտրոնային ծանուցումը անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, ուղարկվել են karen.adamyan@octo.am էլեկտրոնային հասցեին, մինչդեռ Ընկերության հայտում որպես Ընկերության էլեկտրոնային նամակագրության հասցե նշված է եղել info@octo.am էլեկտրոնային հասցն: Իրականում, երկու էլեկտրոնային հասցեներն էլ հասանելի են, սրուգվում են Ընկերության կողմից: Սակայն խնդիրը կայանում է նրանում, որ նշված ծանուցումը, որն ուղարկվել է karen.adamyan@octo.am էլեկտրոնային հասցեին, հայտնվել է այդ հասցեի spam բաժնում, ինչի արդյունքում տեսանելի և հասանելի չի եղել Ընկերության համար, ուստի և Ընկերությունը չի արձագանքել դրան /կից ներկայացվում է էլեկտրոնային ծանուցման արտատպված տարբերակը/: Ընդ որում, 2021 թվականի մայիսի 26-ի թիվ 3 արձանագրությունը ևս հայտնվելն spam բաժնում, և Ընկերությունն այն հայտնաբերել է շատ ավելի ուշ:

Արդյունքում, Գնման ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված նվազագույն գնային առաջարկը մերժվել է, և վերջինիս նախատեսվում է ներառել գնումների գործընթացներին մասնակցության չունեցող կազմակերպությունների ցուցակում:

Այսպիսով, խնդրում ենք Ընկերությանը գնումների գործընթացի մասնակցության իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկում չընդգրկել, քանի որ նշված խնդիրը, անհամապատասխանությունը չշտկելը, առաջացել է բացառապես կապի և հեռահաղորդակցության միջոցների խափանման և/կամ մարդկային գործոնի միջամտությունից անկախ պայմաններում, մասնավորապես նախևառաջ, ծանուցումն ուղարկվել է Ընկերության հայտում որպես նամակագրության հասցե չնշված մեկ այլ, այն է Ընկերոնթյան տեսրենի էլեկտրոնային հասցեին, և անգամ այդ էլեկտրոնային հասցեում ևս հասանելի չի եղել Ընկերության համար, քանի որ հայտնվել է spam բաժնում:»:

24.06.2021թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայաստանի հանրային հեռուսաարևկերություն» ՓԲ Ընկերության (այսուհետ «Պատվիրատու») կարիքների համար Արևային վահանակների տեղադրման աշխատանքների կատարման ձեռքբերման նպատակով 2021 թվականի մայիսի 17-ին հայտարարվելն N ՀՀՀ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

Գնման ընթացակարգի մասնակից է եղել նաև «Օկտո» ՍՊ Ընկերությունը (այսուհետ «Մասնակից» կամ «Ընկերություն»):

2021 թվականի հունիսի 2-ին Պատվիրատուի կողմից գրություն է ուղղվել ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալին խնդրելով ներառել Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով հիմք ընդունելու} ՀՀ գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետը:

Վերոշարադրյալի հետ կապված գնումների հետ կապված բողոք քննող անձին է ներկայացվել Ընկերության դիրքորոշումը, որը ցանկանում ենք լրացնել ևս մի քանի դիտարկումներով, մասնավորապես՝

Ուսումնասիրելով գործի նյութերը՝ կտեսնենք, որ անհամապատասխանություններն արձանագրվել են 24 մայիսի 2021 թվականին, գնահատող հանձնաժողովի նիստի N 2 արձանագրությամբ: Նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը նաև որոշեց շտկումները ներկայացվելու համար սահմանել ժամկետ մինչև 26 մայիսի 2021 թվականի ժամը 17:00: Նշված այծանագրությունը, անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումն Ընկերությանն ուղարկվել է 25 մայիսի 2021 թվականին:

Վերոնշյալ փաստական հանգամանքների հետ կապված հարկ է վկայակոչել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմսն 41-րդ կետը, համաձայն որի՝

«Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժոդովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժոդովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:»

Ինչպես տեսնում ենք, հանձնաժողովի քարտուղարի կողմից չի պահպանվել ծանուցման համար սահմանվաած ժամկետը, այն է նույն օրը ծանուցևյու պահանջը. Ծանուցումն ուղարկվել է Ընկերությանը մեկ օր ուշացմամբ, ոչ թե հայտերի բացման նիստի նույն օրը, այլ հաջորդ:

Ավելին, գտնում ենք, որ անհամապատասխանությունները շտկելու համար տրամադրված ժամկետը, այն է մինչև 26 մայիսի 2021 թվականի ժամը 17:00 ևս իրավաչափ չէ, քանի որ, ըստ վերը նշված իրավանորմի, նիստը կասեցվում է մեկ աշխատանքային օրով, և անհամապատասխանությունն առաջարկվում է շտկել մինչև կասեցման ժամկետի ավարտը, այսինքն մինչև այդ մեկօրյա ժամկետը լրանալը: Տվյալ պարագայում Ընկերության վրա դրվել է նաև ժամային սահմանափակում, ինչն իրավաչափ չէ, քանի որ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը: Ուստի, մինչև ժամը 17:00 ժամանակահատվածով Ընկերությանը սահմանափակելը խախտում է Ընկերության իրավունքներն ու օրինական շահերը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/152 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից արևային վահանակների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 17.05.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Օկտո» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.05.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Օկտո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված թիվ 1 և թիվ 2 հավելվածները ստորագրված չեն եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Օկտո» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 25.05.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի karen.adamyan@octo.am էլ. փոստի հասցեին:

vii. Հանձնաժողովի 26.05.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված տարբերակը և համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի, Հանձնաժողովը որոշել է «Օկտո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

viii. «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 04.06.2021թ.-ի թիվ Հ.Մ./02-117/121 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9350-2021 գրությամբ «Օկտո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի

լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից արևային վահանակների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 17.05.2021թ.-ին հայտարարված «ՀՀՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Օկտո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցի էլեկտրոնային փոստի՝ karen.adamyan@octo.am հասցեին ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման մասին ծանուցում:

26.05.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված տարբերակը և համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի, Հանձնաժողովը որոշել է «Օկտո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

«Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 04.06.2021թ.-ի թիվ Հ.Մ./02-117/121 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 02.06.2021թ.-ին՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժելու հիմքով, սակայն «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 04.06.2021թ.-ի թիվ Հ.Մ./02-117/121 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր

հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9350-2021 գրությամբ «Օկտո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/152 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**